ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2016թ հունիսի 21 **N 77-Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ընտրական օրենսգրքի 145-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության 2016 թվականի մայիսի 25-ի ընտրական օրենսգրքի 144-րդ հոդվածի 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. 2016 թվականի սեպտեմբերի 18-ին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ, Ապարան, Ավշեն, Արայի, Արտաշավան, Բազմաղբյուր, Բերքառատ, Գեղաձոր, Գեղարոտ, Եղիպատրուշ, Երնջատափ, Լուսագյուղ, Ծաղկահովիտ, Ծաղկաշեն, Ծիլքար, Կայք, Կանիաշիր, Կարբի, Հնաբերդ, Մելիքգյուղ, Միջնատուն, Միրաք, Շենավան, Շենկանի, Շողակն, Ուշի, Չքնաղ, Ռյա-Թազա, Սադունց, Սաղմոսավան, Սիփան, Վարդենիս, Վարդենուտ, Փարպի, Քուչակ, Ագարակ, Ագարակավան, Ակունք, Աղձք, Աշնակ, Ավան, Արագածավան, Արագածոտն, Արևուտ, Արուճ, Արտենի, Բյուրական, Գառնահովիտ, Գետափ, Դաշտադեմ, Դիան, Եղնիկ, Զովասար, Թաթուլ, Իրինդ, Լուսակն, Ծաղկասար, Կարմրաշեն, Կաքավաձոր, Մաստարա, Ներքին Բազմաբերդ, Ներքին Սասնաշեն, Նոր Եդեսիա, Շամիրամ, Ոսկեթաս, Ոսկեհատ, Ուջան, Վերին Սասունիկ, Օշական, Օրգով և Ցամաքասար, համայնքներում նշանակել և անցկացնել համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու անդամների հերթական ընտրություններ:

2. 2016 թվականի սեպտեմբերի 18-ին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Սորիկ, Սասունիկ, Պարտիզակ, Ոսկեվազ, Շղարշիկ, Կանչ, Կաթնաղբյուր, Լեռնարոտ և Նորաշեն համայնքներում նշանակել և անցկացնել համայնքի ղեկավարի հերթական ընտրություններ:

3. 2016 թվականի սեպտեմբերի 18-ին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ալագյազ, Արագած, Ափնագյուղ, Գեղադիր, Լեռնապար, Ղազարավան, Ճարճակիս, Ջամշլու, Վարդաբլուր, Օհանավան, Անտառուտ, Զարինջա, Թլիկ, Կոշ, Հացաշեն, Վերին Բազմաբերդ, Տեղեր, Օթևան և Հակո համայնքներում նշանակել և անցկացնել համայնքի ավագանու անդամների հերթական ընտրություններ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հուլիսի 9-ից:

Գ.ԳՅՈՌԱԼՅԱՆ